

ԳՐԱԽՈՍՔՆԵՐ

ԱՐԺ ԵՒ ԱՄԱԿՈՇԱԿԹԻԿՆ

Առաջնորդ Ընտանիքան Երշանկութեան

Զգօն Ֆ. Արդ. Տէր - Օպերիան

Վենետիկ, 1954

Սիրոյ, ամուսնութեան և ընտանեկան երջանկութեան ընծայուած այս հատորը, զրուած Հայ Եկեղեցւոյ նուիրեալ պաշտօնեալի մը կողմէն, ոչ միայն զեղեցիկ ճիզ մըն է լուսաբանելու ամուսնացող զոյզերուն իրենց ընդդրկած նոր կեանքը, այլ մանաւանդ ըսելու, որպէսզի իրենց այս արարքը կարենայ բարոյական արժէք մը դառնալ, անհրաժեշտ է որ ամուսնական բնական ու ընկերային գաշինքին հետ նոյնանայ նաև կրօնական տեսակէտն ու սկզբունքը: Առանց այս խորհուրդին ու ուղրութեան, որ ծէս մը ըլլալէ առաջ՝ զգացում մը, սկզբունք մը և գաշինք մըն է միանգամայն, ամուսնութիւնը կրնայ վերածուիլ ժամանակաւոր քմահանոյքի: Եթէ անոր վրայ չտիրապետէ աստուածային սիրոյ բացայայտիչ զօրութիւնը:

Տակաւին հատորը մեզի կը բերէ տարիներու փորձառութիւններէն շինուած, գրքերու իմաստութեամբ ճախացած թելազրիչ և ազնիւ մտածումներ, որոնք զայն կը վերածեն սնարի յատուկ մատեանի և առաջնորդի, ամուսնական կեանքը սկսող և կամ անոր պատրաստուող բոլոր զոյզերուն համար, որոնք կ'ուզեն որ կեանքը իմաստ մը, նպատակ մը և քաղցրութիւն մը ունենայ մեր այս մոլորակին վրայ:

Հատորը բաժնուած է չորս զիսաւոր մասերու, Ամուսնականէ, Նեանականէ, Պատկանակ և Սիրախօսականէ: Ամուսնականի մէջ հեղինակը վերլուծական մեթոսով մը կը ճշգործէ ամուսնական դժբախտութեանց կարեսը պատճառները, սիրոյ բացակայութիւնը ամուսնացող զոյզերուն միջն, նկարագրի անհաջողութիւններ, ընկերային պահանջներու անտեսումներ, զիրար հասկեալ չկարենալու ազիտութիւնը, տնտեսական պարագաներ, եւ ապա անհաւտարմութիւն որ կուգայ վերջ դնելու ամուսնական կեանքին, վերածելով զայն երկուստեք

շինուած անիմաստ դժբախտութեան մը: Հոգեշնորհ հեղինակը հանգոյց առ հանգոյց վերլուծած ու հրեսած է այս բոլորը, մտերմիկ ու խմաստուն զառաւորումի մը մէջ, բարձրարէն թէլազրիչ և օգտակար:

Նշանական բժիշկ բաժինը կը բավանդակէ նշանատու քի յատուկ ծխական և աւանդական խորհրդանշներու թըլումն ու անոնց նշանակութեանց բացատրութիւնը, ինչպէս նաև գէպի ամուսնական խորհուրդ առաջնորդող արարմունքներ՝ ձեռնառութիւն, գլուխ գլխի հպում, նարօտի օրհնութիւն, բոլորն ալ նշուած ու վերբերուած յանկուցիչ ու գողտը արտայայտութիւններով:

Պատկանակնել, Հոգեշնորհ հեղինակը կը խօսի Առուրը Պատկի ծէսին և խորհուրդին չուրջ, աստուածաբանական և բարոյական յորդուններով բարացուցելով անոր վսեմ ու անքակտիլի խորհուրդն ու մեծ նշանակութիւնը կեանքի մէջ: Արքան տեղին և ուշագրաւ են իր արտայայտութիւնները այս օրերուն մանաւանդ, երբ ամուսնական կեանքը սկսած է կորսեցնել տառեաւ իր արժէքն ու նպատակը, վասնզի մարդկային ապրումները առօրեայով միայն պայմանաւոր՝ զարդած են ըլլալէ վերելակումի ճիզ մը, կատարելութեան ընթացք մը և պարտականութեան քաղցր բնու մը, և վերածուած ժամանակաւոր և անիմաստ փորձի մը, կեանքի լարձուն յատակին վրայ:

Սիրախօսականի ազուրը ծաղկաբազ մըն է հին և նոր հեղինակներէ, որուն նպատակն է, համաձայն նոյնինքն հեղինակի վկայութեան, ոչ միայն սրելու համար հետաքրքրութիւնը սիրողներուն կամ նոր թափ մը տալու անոնց սիրոյն, այլ մանաւանդ ընդլայնելու համար ընթերցողներու հասկացողութիւնը սիրոյ մասին:

Իցիւ թէ շատնար այս նպատակով և մտահոգութիւններով գրուած նման հատորներուն թիւը, ատիկա մեծ ազոյն բարիքներէն մին պիտի ըլլար մեր ընտանեկան աղքատ գրադարաններուն՝ ինչպէս նաև կեանքերուն համար: Հոգեշնորհ Տ. Զգօն Ծ. Վրդ. ի այս հատորը զեղեցիկ իրազործում մըն է իր տեսակին մէջ, լիուլի ծառայող իր նպատակին: